ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

2002 թ. նոյեմբերի 16-ին, Անդրեաս և Փիլիպպոս առաքյալների տոնին, երեկոյան, հավարտ կիրակնամտի ժամերգության, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև, կատարվեց Կարեն սարկավագ Քարամյանի և Արտյոմ սարկավագ Ավետիսյանի քահանայական ընծայման կարգը՝ «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» արարողությունը՝ ըստ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ձեռնադրության Մաշտոցի: Նվիրյալները ծնրադիր մոտեցան ձեռնադրության խորհրդակատար պաշտոնյային՝ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանին:

Արարողության խարտավիլակ Տ. Արտակ վրդ Տիգրանյանը, ըստ ձեռնադրության Մաշտոցի, հայցում է. «Հայր Սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես զսարկաւագունս, զոր ընծայէ քեզ յասպիճան քահանայութեան»: Այնուհետև Հայր Սուրբը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության մասին՝ նրանց ներկայացնելով արժանի ձեռնադրության: «Կոչումն քահանայութեան» ավարտին Կարեն և Արտյոմ սարկավագները հանդիսավորությամբ ասացին Ս. Գրիգոր Տաթևացու «Հավատո խոստովանությունը»:

Նոյեմբերի 17-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը: Սրբազան Հայրը մատուցած այս Պատարագի ժամանակ կատարեց իր անդրանիկ քահանայական ձեռնադրությունը: «Զի ողորմած ու մարդասէր ես, Աստուած» աղոթքի ժամանակ խարտավիլակ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը ծնրադիր սարկավագներին առաջնորդեց դեպի Ավագ Ս. Սեղան: Երկու սարկավագները ծնրադիր մոտենում են ձեռնադրող Սրբազանին: Արտյոմ սարկավագն իր ուխտն է կապում որպես ամուսնացյալ քահանա, Կարեն սարկավագը՝ որպես կուսակրոն քահանա: Տ. Առաքել եպիսկոպոսն իր ձեռքը դնում է յուրաքանչյուրի գլխին ու հանդիսավոր արտասանում ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերա սորայ, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք»:

Ստացած ձեռնադրությամբ և օծմամբ Արտյոմ սարկավագ Ավետիսյանը վերանվանվում է Տեր Սողոմոն, իսկ Կարեն սարկավագ Քարամյանը՝ Տեր Դավիթ: Նորընծաները դառնալով դեպի ժողովուրդը՝ Սուրբ Խորանից դալիս են իրենց անդրանիկ քահանայական օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Շնորհավորելով նորընծաներին՝ պատարագիչ Սրբազան Հայրը ձեռնադրության առթիվ խոսված քարոզում նորընծաներին հորդորեց օրինակ լինել հավատացյալներին «խոսքով, վարմունքով, սիրով, հավատով ու սրբությամբ» (Ա Տիմ. Դ 12)՝ ասելով.

«Սիրելի հավատավոր ու հավատակից քույրեր և եղբայրներ.

Այսօր նվիրական և հիշարժան օր է մեզանից յուրաքանչյուրի համար: Նախ ուրախության ու հոգեկան բերկրանքի պահ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ու մեր հավատացյալ ժողովրդի համար:

Այսօր վերապայծառացել է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, քանի որ Մայր Աթոռի հոգևոր այգում հոգևոր պարտեզում տնկած երկու ծառեր ծաղկել են և շուտով իրենց պտղաբերությամբ պետք է լցնեն մեր Եկեղեցու հոգևոր անդաստանը:

Մեր ժողովուրդն այսօր առավել քան երբևէ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում և թե՛ ի սփյուռս աշխարհի կարիքն ունի մեր Եկեղեցու անդաստանում թխված հացի, մի հացի, որ հոգևոր է, մի հացի, որ սնունդ է հոգու, մի հացի, որից որքան շատ ես ճաշակում, այնքան շատ ես փափագում:

Ահա մեր նորաօծ քահանա եղբայրներն այսօրվանից կոչվելու են մեր Եկեղեցու անդաստանում հոգևոր մատակարարները դառնալու մեր ժողովրդի:

Մեր նորընծա ձեռնադրյալների՝ Աստծուն ընծայման ասպվածահաճո ուխտի առիթով ես գոհություն և փառաբանություն եմ վերառաքում առ Բարձրյալն Աստված՝ ասելով. «Փառք քեզ, Տէ՛ր, փառք քեզ, յաղագս ամենայնի, փառք քեզ, Տէր», որ արժանի արեցիր ինձ քո Սուրբ Սեղանին պատարագելու և ձեռնադրության այս կարգը կատարելու:

Սիրելի հավատավոր ժողովուրդ, եկեք մեկ անգամ ևս շնորհավորենք մեր նորաօծ հոգևոր եղբայրներին, նրանց ծնողներին, հարազատներին և, ինչո՞ւ չէ՝ նաև մեկս մյուսին և միասնաբար աղոթենք առ Բարձրյալն Աստված՝ հայցելով Ամենակարողից, որ Հայր Դավիթը և Տեր Սողոմոնն առանց փորձության, աղոթքով և ասպվածպաշտությամբ անցկացնեն իրենց 40-օրյա պահոց շրջանը և ցկյանս հաստատ ու անսայթաք մնան իրենց ուխտի մեջ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Հավարտ Ս. Պատարագի, նոր ձեռնադրված քահանաներին մոտենալով, շնորհավորեցին և նրանց նորաօծ մյուռոնաբույր ձեռքերը համբուրեցին արարողությանը ներկա գտնվողները:

Ս. Պատարագին ներկա էին նաև Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո Գուջերոտին և Հայաստան այցելած մի խումբ կաթոլիկ հոգևորականներ:

Նույն օրը, երեկոյան, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցավ Տ. Դավիթ աբեղա Քարամյանի վեղարի տվչության արարողությունը:

ՄԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ